ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR

2021 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Mets Ave.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: info@hcav.am

Ե/2026-18.02/83
18.02.2026 թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Արեն Մկրտչյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ այն մասին, թե ՀՀ կառավարության 2013 թ. հուլիսի 25-ի N 796-Ն որոշմամբ սահմանված այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրերի (կազմակերպությունների) ցանկում ներառված և ՀՀ Լոռու մարզպետարանի վերահսկողության ներքո գտնվող վայրերում

1. ներկա դրությամբ քանի հոգի է անցնում այլընտրանքային աշխատանքային ծառայություն,
2. նշված անձանցից քանիսն են զորակոչվել այլընտրանքային աշխատանքային ծառայության
   - 2025 թ. ամառային զորակոչին,
   - 2025 թ. ձմեռային զորակոչին։

Միաժամանակ խնդրում եմ տեղեկությունները տրամադրել **ըստ յուրաքանչյուր հաստատության։**

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է

այն ստանալուց 5-օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
Էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am